Մրցույթ՝ «Խնձորեսկի Գ. Սևունցի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (15 ժամ), մաթեմատիկայի (9 ժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթը անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

• դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

• բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

• անձը հաստատող փաստաթուղթ,

• «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի առաջին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,

• ինքնակենսագրություն (Ձև 5),

• այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,

• ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

• հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

• որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է, մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը, վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2022 թ. սեպտեմբերի 2-ից մինչև 2022թ. սեպտեմբերի 15-ը ներառյալ, ամեն օր ժամը 9:00-ից 15:00, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2022թ. սեպտեմբերի 23-ին՝ ժամը 13:00-ին, ՀՀ** Սյունիքի մարզի Խնձորեսկի Գ. Սևունցի ավան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Սյունիքի մարզ, Գորիս համայնք, գյուղ Խնձորեսկ 36փ. 18շ.:

Տեղեկությունների համար զանգահարել (0284) 64-4-21 հեռախոսահամարով: